

ՊԱՏԱՆԵՐ

Տարեկան գին Կ. Պոլսի 8 ՄԶ.
Գառառայ 10 ՄԶ.
Վեցամսեյ Կ. Պոլսի 4 ՄԶ.
Գառառայ 5 ՄԶ.
Մանուկներու տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար դուր տակարար թիւն կը-
լայ :



ԼՐԱԳԻՒՆ

ԲԱՆԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 1 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԲԱՆԱՔԱԿԱՆ

Պատերազմական ասպարէզէն քա-
նի մ'օրէ 'ի վեր կարեւոր լուր մը չը
կայ: Պաշտօնական հեռագրերը դադ-
րած էին՝ հեռագրական լիւրերուն
խղման պատճառաւ: Բայց երեքշաբ-
թի օրը մասնաւոր լուրեր կը ծանու-
ցանէին թէ Ռուսը նոյն օրը Բլէքմայի
վրայ նոր յարձակում մը պիտի ընէ-
ին: Օսման վաշայէն քանի մ'օր յա-
ռաջ եկած հեռագրաւոր մ'արդէն
կըսէր թէ Ռուսը լիւրեանօթով կը
պատերազմէին առանց արդեանց:

Լուր պահուած էր ներկայ միջո-
ցին անօգուտ չըլլար ակնարկ մը ձը-
գել եւրոպական քաղաքականութեան
վրայ: Այս քաղաքականութեան ան-
շափ անշարժութեան մէջ է, որ կար-
ծես 'ի բուն է: Դիւանագէտը կ'ըզ-
բանուն կամ որսի կերթան, որպէս
թէ մեծ պատերազմ մը չճարակէր:
Բայց իրողութեանը բոլորովին անտար-
բեր չեն: Ընդհանուր պատերազմ
մին դարձածները զիւրեք խիստ
ուշադիր կը գտնէ: Միայն թէ առ այ-
ժմ միջամտութեան զո ուշանալու հա-
մար մեծ շրջանայեցողութեամբ կը գոր-
ծեն: Բայց այս ընթացքն Արեւելեան
գործերէն բոլորովին ձեռնադաշտ-
թիւն չէ, այլ կէս պաշտօնական լիւր-
թերը կը յայտարարեն թէ երբ մամը
գայ, Եւրոպական աշխարհը լիւրեան-
ութեանը՝ Անգլիոյ և Ամերիկայի ազդե-
կերպիւ պիտի միջամտեն: Առ այժմ
Պիսմարք իշխանը գործունէութեան
նշան ցոյց տուաւ՝ ձենէվրայի պոյ-
մանագրութեան գէտ օրպէս թէ զեզ-
ծում: Ըլլալու պատրուակաւ ծանու-
ցալիւր մ'ուղղելով Բ. Դրան: ձենէվ-
րայի պայմանագրութեան, ինչպէս
յայտնի է, պատերազմի մէջ գերեաց
և վերաւորելոյ նկատմամբ բռնուե-
լիք վարմունքն որոշած է, և Եւրո-
պական տէրութեանց ամենքն ալ,
որոց հետ նաև Բ. Դրան ալ ստորա-
գրած են զայն: Սուտի Գերմանիոյ
հրաւիրմամբ տէրութեանց ամենքն ալ
գրեթէ նոյն ծանուցող լին իրենց հա-
ւանութիւնը տուին, որով իրենց առ-
Բ. Դրան ներկայացուցած ազդարա-
րութիւնները միաձայն եղան: Բայց
ուշագրութեան արժանի կէտ մը կայ
որ Եւրոպիոյ հեռատես գիւտագի-
տայ ակնարկին վրիպած կերպի: Եւ
թէ ձենէվրայի դաշնագրութեան գէտ
գործումը զեզծումներուն գէտ բո-
ղորովը նախ Ռուսիա ըլլար, զուցէ
'ի սկզբան անոր գանդաւան 'ի նկատի
առնուիլն արդարանար: Բայց գան-
գաւան 'ի սկզբան Բ. Դրան ընելը
կըսած է: Ռուսը Արտահանի գէտքին
ժամանակ յայտնապէս արհամարհած
էին ձենէվրայի դրօշն: Եւրոպիոյ կողմն
ալ Վիտինի հիւանդանոցը ումակու-

ծեցին, առանց յարգելու ձենէվրա-
յի պայմանագրութեան դրօշն որ ա-
նոր վրայ կը ծածանէր, և քանի մը
հիւանդներ մեռան կամ վերաւորե-
ցան ուստական բռնութեան:

Վիտինի մէջ ծածանող դրօշը Բա-
լաֆաթէն անկարելի էր չտեսնել,
ուստի Ռուսը գիտութեամբ Օսման-
եան հիւանդանոցը բռնակողմեցին
և ձենէվրայի պայմանագրութեանը
բռնարարել սկսան: Այնուհետև ալ
հետզհետէ իրենց այս ազդեաց իրա-
ւանց հակառակ ընթացքը շարու-
նակեցին: Այս գէտքն այն ժա-
մանակ բոլոր աշխարհ իմացաւ: Եւ
բողական լրագրաց լիւրեանցիւր և
բազմաթիւ ակնաւոր վկայք զայն
հաստատեցին: Բայց և այնպէս ձե-
նէվրայի գաշնադրութեան ստորագ-
րող տէրութիւններէն և ոչ մին ձայն
հանեց: Այլ կարծես թէ իրենց լու-
թեամբ քաջալերեցին Ռուսերն իրենց
զեզծումները շարունակել նոյն պոյ-
մանագրութեան գէտ: Ռուսիա ալ
ամենայն համարձակութեամբ դարձ-
եալ իւր աւերիչ գործը ձեռք առաւ:
Բիւլ մը վերջը Ռուսիոյը բռնակո-
ծեց, յորմէ ամենէն աւելի փնտա կը-
ղեն անմեղ բնակիչը և խեղճ հիւանդ-
ներ եղան: Եթէ Ռուսը իրենց բռն-
բերը միայն Օսմանեան ամբողջութեանց
վրայ ուղղէին, պատերազմի օրինաց
համեմատ վարուած կը լինէին: Բայց
ոչ: Այլ կարծես թէ աւերման մեղք-
նութեամբ մը բոլորեալ, իրենց
առնութեան գիտմամբ քաղաքին վրայ
կուղղէին, առանց յարգելու ոչ հի-
ւանդանոցներն, որոց վրայ ձենէվ-
րայի դրօշը կը ծածանէր, ոչ ալ
թատերիկները, ոչ հիւանդանոցներն
ներն՝ որոց վրայ տէրութեանց դրօշը
կար, ոչ մասնաւորաց տուններն՝ որոց
բնակիչները ստորագրութեան 'ի փա-
խուստ կը գնէին: Հիւանդը, կա-
նայք, մանկուքը և բնակիչներէն չա-
տեր Ռուսաց բռնութեանը զո եղան:
գործն այն ատիկան հասաւ որ Օս-
մանեան հիւանդանոցներուն մէջ պաշ-
տօն ունեցող Եւրոպացի բժիշկները
ձենէվրայի պայմանագրութեան դրօ-
շին գէտ կատարուած այս ծանր գեղ-
ծումները տեսնելով, որք իրենց կե-
նացն իսկ կ'սպաւնային, խոստովին
հրաժարական կուտային: Ի՞նչ ըրին
ձենէվրայի դաշնագրութեան ստո-
րողը տէրութիւնը՝ Ռուսաց այս
բարբարոսական պատերազմի եղա-
նակն արգիւելու համար: Մեր գիտ-
ցածին նայելով բնաւ բան մը չըրին:
բնաւ սկիզբաւորը ազդարարութիւն
մը չուղղեցին Ռուսաց, որպէս զի
ձենէվրայի պայմանագրութեան յար-
գէն:

Ռուսը Դանուբն անցան, և ի-
րենց խաղաղներուն՝ այն է անկանոն
հիւանդանոցաց առաջին քաջագործու-
թիւններն անփնտ Գիւլայիներու և
խեղճ փախստական կանանց և ման-


կանց վրայ 'ի գործ դրուեցան: Տա-
կաւին որո՞ւ միտքէ ելած է խաղախ-
ներուն Օսմանեան հպատակները բռ-
նելով խաղախանոց սպանները, ա-
նոց աչքերն հանելով մէջը հացի կը-
տորները դնելը, մանուկներն և երա-
կայներն իսկ անխնայ տէգով շամի-
րելը, կանանց վրայ գործումը խոթ-
գրածական և վատ յարձակումները:
Բայց Ռուսը ամենէն մեծ պատու-
հաս մ'ալ բերած էին իրենց հետ,
այն է Պոլսի վրայ լեզէն, որուն
“Վրէժխնդրութեան լեզէն” տիտղո-
սը տալէ չէին քաշուած Եւրոպիոյ աչ-
քին առջև: Վրէժխնդրութեան, Բայց
ոչ չգիտէր թէ այս բառը քաղաքա-
յին պատերազմ կը նշանակէր իւր
ամեն յարակից ոճիւրներով, որոց նը-
կարագիրը ստիմամբ կարգադրուեցաւ,
և որք պատճառ եղան այնպիսի ժա-
մանակ Բուլղարի մէջ խաղաղութեամբ
ապրող խաղախ և Պոլսի վրայ մէջ
արիւնդուշտ առնելութիւն և լիւր-
մութիւն բորբոքելու: Բայց և այն-
պէս Եւրոպա բնաւ գիտութեան մը
չըլլաւ, և յուրեայն լիւր տուաւ Ռու-
սաց որ իրենց անգլիոյ լիւրեաններն հա-
մարձակ գործեն: Ասով Եւրոպա ալ
անուղղակի կերպիւ մասնակից գը-
նուեցաւ Ռուսաց կրած պարտաւա-
նաց: Ժամանակ և երբ Ռուսը պա-
տերազմի ասպարէզին վրայ իրենց
յուսացած դաշնակիցները չգտան, երբ
իրենց անխնայ յարձակումները մեծ
կարուստներ տալէ ետև կարակոր յե-
առա նահանջեցան, իրենց զորավոր-
ներն ուշագրութեան չըրին թէ նորա-
հնար զենքերու ժամանակ ամբաց-
եալ դիւրեքութեամբ յարձակող զին-
ւորները կոտորածի պիտի հանդիպէ-
ին, մասնաւոր երբ այն ամբողջութիւն
ներն Օսմանեանց պէս քաջամարտիկ
զորաց ձեռք ըլլան: Խաղախ պարտու-
թեան սրամտութեամբ կը գանգա-
ւին թէ Օսմանեան կանանաւոր զո-
րութիւնները ձենէվրայի պայմանագ-
րութեան գէտ գեղծում կը գործեն
(խօսքերնիս Չէքքէզ և Բիւրդ անկա-
նոններուն գործած խոթումներն
վրայ չէ), և զարմանալին այս է որ
այս գանգաւոր լուր ակնաշններ կը
գտնուին, և մինչև անգամ Բ. Դրան
գիտութեան լիւրեան կըլլան: Ստուգիւ-
այս ընթացքին մէջ ամենամօթոր ար-
գարութեան նշող մը տեսնել անկա-
րելի է:

Մայրաքաղաքիս Լէվոնթ Հէրըլտ
լրագրին մէջ հետեւեալը կը կար-
գանք:

“Ստոյգ աղբիւրէ կիմանանք թէ
Ռուսերը կարող պաշտօնաւոր վերու-
ցած ժամանակներն Ալեքսանդրաքոյ
փոխադրած պաշարման խոշոր լիւր-
դանութիւնները նորէն Գէօրիլ-ք-Տէրէ կը
բերեն: Կրտսի թէ Մոսկովի փաշա
չկարծէր որ այն ծանրաշարժ լիւր-
նութիւններուն վերադարձը վերստին

ՊԱՏԱՆԵՐ

Դուրս գացած լրագրաց ծանու-
ցաւորը խորագրութեան վրայ է:
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խորագրի
— Տնօրէնին պիտի ուղղուի: Ղալա-
թիս Սանտրոքթըար Հատակի թիւ
198, Դորո խան, Մատիի գրասեն-
եանը:
Հանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր:



յարձակողականի սկսելու նպատակաւ
ըլլայ: Իրօք ալ կերպի թէ լիւրեան-
այս միջոցիս յառաջ քաշելու վիճակի
մէջ չէ, վասն զի ոչ կեդրոնական
բանակին զորավարներն, ոչ ալ Տէր
Ղուկասոֆ զորավարն իրենց սպասած
օգնութիւններն ստացած են: Մուխ-
թար փաշայի կարծիքն այս է թէ
ներկայ շարժման նպատակն՝ Օսման-
եանց կողմէ յանկարծական յարձա-
կում մը եղած ժամանակ անպատրաստ
չգտնուիլ է, ինչպէս որ գտնուած
էին Գըղըլ-թէփէի վրայ յարձակում
եղած միջոցին, ուր Օսմանեան զոր-
քը լիւրեանցն այն դիրքը բոլորովին
անպատրաստ գտաւ:

“Այս լուրը չաբաթ օրն եկաւ
մեզ կարինէն, ուսկից լուր կուտան
նաև թէ Կարսէն բազմաթիւ հի-
ւանդը և վերաւորը կը հասնին:”

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Սիւլէյման փաշայի բանակէն ե-
կած հեռագրաւոր մը կը ծանուցա-
նէ թէ Նիքիայի մօտ բանակեալ Օս-
մանեան բանակը Բուլղարի կիցն ան-
ցեր և Պաշ-թէփէ բնուած գիրքը
գրաւեր է: Յետոյ գտնուեց մը հեծե-
լուոր Բուլղարի և Պիլիպի կողմերն
հետագոտութեան երթալով, Պիլիպ-
յի մինչև չորս ժամ մնալով բնու լիւր-
նամի չէ տեսնել: Սակեց կը հա-
կըցուի որ Ռուսը Լոմ բուրք զիծե-
րէն կը քաշուին:

Բլէքմայի կողմէն եկած մասնա-
ւոր լուրեր կը ծանուցանեն թէ Ռուսը
երեք զորաբանակ քաշեցուցեր են
Բլէքմայի վրայ, և երէկ կամ այսօր
ընդհանուր յարձակում մը ընելու կը
պատրաստուին եղեր:

Երկու օրէ 'ի վեր լուր կը պար-
տի թէ Գարաապաղիք Նիքիայն առե-
րն, բայց այս լուրն հաստատող աշ-
տօնական հեռագիր չկայ:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 10 սեպտ.

Մերակուտի ժողովին հանրապետա-
կան կուսակցութիւնն յատուկ ուղերձով
մը շնորհակալութիւն կը յայտնէ Տիկին
Թիլիքի իւր արիւնքութեան ու շայքնաւոր-
ութեան համար: և յոյս կը յայտնէ թէ
յատակիկայ երեսփոխանական ընտրու-
թեանց մէջ յաղթութիւնն հանրապետա-
կանաց պիտի մնայ:

Պերլին 10 սեպտ.

Ռուսիոյ վերջին փոխտուրութիւնն ըս-
տորագրողները չեն ուզեր երկրորդ վը-
ճարքը կատարել:

Պորտո 10 սեպտ.

Մալ-Մաշն մարաշիստ Պարտիի քա-
ղաքական մէկ բանախօսութեանը պա-
տաւանեալով՝ հետեւեալ խօսքերն րու-
ս. «Հաւատարմ եղիք թէ խաղաղութիւնը չը
պիտի վրա լի: Երբոր երկիրն իմ հրաւե-
ւելիս պատասխանէ, Մաշնապաղութիւն
ներն, որուն յարեալ էք, և որուն հետ

ւատարմի՝ պահպանելով պիտի ըլլամ ես, առանց արդեւի իւր պատճառները կատարելով՝ ազգային բարոյականաց կատարելալ դարգացումը պիտի ապահովէ։»

Վիշննա 10 սեպտ. Այսօր Քոչանի մօտ (Հունդարիա) զինուորական վարժութեանց մեծ փորձերը պիտի սկսին ի ներկայութեան կայսեր և Ալլաբեկի և ժան արշիդքոյի։

Մոսկուա 10 սեպտ. Երկաթուղեայն ընկերութեան հաշիւներուն մէջ մեծագուտար խարդախութիւններ ըրած ըլլալու ամբաստանութեամբ դատաւարանին ենթարկեալ Պ. Շիբրուս պէրի անսպարտ արձակեցաւ։

Ռաշով (Հունդարիա) 11 սեպտ. Արքունեայ ճաշի մը մէջ, որուն ներկայ էին Ալլաբեկի և ժան արշիդքոյի, Լէորոտ իշխանն և ամեն օտարազգի զինուորական պաշտօնակարը որք զինուորական վարժութեանց դործերուն ներկայ կը գտնուէին, կայսրը բաժակ առաջարկեց վասն առաջնութեան իւր սիրելի բարեկամ և դաշնակից Ռուսիոյ կայսեր, որոյ տոնակոթիւնին է այսօր։ Նոսալ գարաւք Ռուսական երգը նուագեցին։

Պուրէշ 11 սեպտ. Կարօլս իշխանը յայտարարութիւն մը հրատարակեց, որոյ մէջ Ռուսականաց Ռուսաց հետ գործակցելուն պատճառները կը յայտնէ։

Վիշննա 12 սեպտ. Քոչանքոտանի Բոլիթի լրագրողը հետեւեալ հետադիւրը կը հրատարակէ Պէշկերտային։

«Միւս իշխանն աչքէ անցուց Թոփի ծիւղի բանակներուն և Պէշկերտայի բերդը։ Դարունակ թողնուած և ուղղութիւնը կը զրկուին յԱլլաբեկեայ և ի Տէրիկրատը»։

Հուսի 12 սեպտ. Պապին հիւանդութիւնն երկուց կազմէ միւս։ Բայց և այնպէս ուխտաւորներն ընդունելը կը շարունակէ։

Փարիզ 12 սեպտ. Մաք-Մահոն մարտական այսօր Բէշկէօ հասաւ։ Ամեն տեղ ջերմ ընդունելութիւն կը գտնէ։

1 սեպտ. 12 սեպտ.

Օսմ. քօնա.	9 1/2
Փոխ. 1863	9 3/4
• 1869	9 3/8
• 1871	38 1/2
• 1872	47
• 1873	9 1/2
• Եղիպտ.	36 7/8
Անգլ. քօնա	9 5/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝ Նիշի կառավարիչ Հիւրի փաշան Ֆիլիպէի կառավարիչ անուանեցաւ։

Հուսի նախորդ Օսմ. դեսպան Էսատ պէյ Վիշննայի դեսպան անուանեցաւ Պալայի աստիճանաւ։

Պէրիին դեսպանատան առաջին քարտուղար Թիւրխան պէյ Հուսիի դեսպան անուանեցաւ Իւլայի աստիճանաւ։

Ներկայ պարագայից պատճառաւ վեհ. Սուլթանն հրաման ըրաւ որ տէրութեան նախարարներն ու բարձրաստիճան պաշտօնատար ամեն իրիկուն քանի մը ժամ Սպարապետի դուռը դուրսարեւելով տէրութեան գործերուն զրադին, և ժամանակ վատակելու համար ի թիւարն ալ հան ընեն։

Եպարգոսական հրամանագիր մ'ալ կը պատուիրէ տէրութեան պաշտօնատարաց, որ ամեն օր ժամ վեցէն մինչև տասնե մէկ իրենց պաշտօնարանը դադարեն։

Վաղըթ լրագրողը կը ծանուցանէ թէ Օսմանեան զօրքերը բոլորովին քաշուեր են Սոխում—Գալէէն, բայց իրենց մեկնելէն առաջ տեղւոյն 4000 ի չափ խաղա և Գրիստոնեայ Ապաղէսներն՝ որք Ռուսիոյ դէմ ապստամբած ըլլալով՝ անշուշտ անոր վրէժիւ գրաւութեանը զոհ պիտի երթային, Տրապիզոնի Սամսոնի և Էւրէյի կողմերը փոխադրեր են։

Երկու շաբթի օրը Սուլթանէն եկող իտալական Էթնա չափնաւին նաւակաւ լուր բերեր է թէ իւր Սուլթանայէն մեկնելուն առջի իրիկունը

չորս Ռուս սպայք ներկայացեր են հոն իւր պատգամաւ որ և հրաւեր կ'որդացնէ են բնակչայ որ մեկնին քաղաքէն, վասն զի յարձակում պիտի կրէր։ Ասոր վրայ Սուլթանի բոլոր բնակիչք դէպ Ս. ի Եօրիկի փոխեր են։ Հոն սպասող Անգլիական թիւղաւորակիր շափնաւն ալ մեկնէր է։ Հիւսպատուք ալ ուրիշ իտալական փաղքը շոգենաւ մը նստելով հեռացեր են։ Հետեւեալ առաւօտուն վերադարձեր են։ Նուազանդատին մէջ երկու երեք Օսմանեան պատերազմիկ նաւեր կային։

Լէվընթ Հէրըտ կը ծանուցանէ թէ երկու շաբթի օրը մայրաքաղաքիս Գերմանական դեսպանը Վեհ. Սուլթանին ներկայացած ժամանակ դեսպանուհի տիկինն ալ ի միտին ներկայացեր է, և տեսակցութեան ետեւ վեհ. Սուլթանն անձամբ դեսպանուհին առերիւր առաջին լծակից կայսրուհւոյն քով տարեր է, ուր դեսպանուհին և կայսրուհին տեսակցեր են, թարգման ունենալով ջերքէզ աղախին մը, որ խիստ լաւ Գաղղիերէն կը խօսէր։

Վաղըթ լրագրիւն ալ կը ծանուցանէ թէ մայրաքաղաքիս Գերմանական դեսպանն երկու շաբթի օրը Վեհ. Սուլթանին հետ տեսակցած միջոցին ըսեր է թէ վերջին Ֆրանքո—Գերմանական պատերազմին ժամանակ փորձով տեսնուած է որ առժամանակեայ փայտաշէն հիւրերն (պառաքա) առողջապահական նկատմամբ հիւանդանոցներէն աւելի օգտակար են, և թէ հիւանդ և վիրաւոր զօրականք աւելի շուտ կը բժշկուին անոնց մէջ։ Դեսպանը վեհ. Սուլթանին խնդրածք այն հիւրերուն ձեռն ալ անմիջապէս գծելով ներկայացուցեր է, և Ն. Կ. Վեհափառութիւնն ալ հրաման րրեր է, որ այն ձևով բազմաթիւ հիւրեր շինուին մայրաքաղաքիս յարմար կողմերն, և վիրաւոր ու հիւանդ զօրականք անոնց մէջ դարմանուին։

Վիշննայի մէջ Պուրեցի Հոյ մը՝ Ստեփան Յակոբեան անուն՝ ռուսական կեղծ արժեթուղիներ շինելով բռնուեր է։

Այս ձերբակալութեան պարտգաներն հետեւեալ կերպիւ կը ծանուցանէ Վիշննայի Դանուր լրագրիւն։

«Վեց ամսէն աւելի ժամանակէ ի վեր ռուսական կեղծ պանթիւններ ելած ըլլալը ծանուցուած էր թուղթի թէ ռուսականներն չիւրաբերութիւնը խիստ գաւառացած էր՝ խարդախեաներուն շատութեանը պատճառաւ։ Եւրոպիոյ գլխաւոր քաղաքաց մէջ ռուսականութեան բոլոր խուզարկութիւններն անպտուղ մնացած էին։ Վերջապէս նոր դէպք մը դրամաներէն քանի մը ծայրը գտնելու առիթ եղաւ։ Վերջին օգոստոս 27 ին, վա. յետուի հազուադ օտարական մը Սթէֆանուրայի դրամափոխներուն միոյն ներկայանալով 15 հատ 10 լուսինոց թուղթ օսկի փոխել կառաջարկէ։ Դրամափոխին գանձապահը թուղթի թերն ուղղութեամբ քննելով կը տեսնէ որ կեղծ էին, և օտարականն օստիկանութեան կը յանձնէ։ Եղած հարցաքննութեան մէջ օտարականը կըսէ թէ ինք Կ. Պուրեցի Հոյ մ'է Ստեփան Յակոբեան անուն, թէ վերջին ժամանակներս փարիզ կը կենար, և թէ այն Պանթիւններն անձամբ անձէ մը գնած էր։ Բնակարանին մէջ խուզարկութիւն ըլլալով, ուրիշ բազմաթիւ կեղծ Պանթիւններ գտնուեցան, ամենքն ալ վիճաբարութեամբ

չինուած։ Ռուսականութիւնը դրամաներէն ընկերներն ալ գտնելու ետեւէ է։

Յառաջիկայ շաբթի օրը առաւօտեան ժամ 10 1/2 ին ըստ Եւրոպացւոց՝ Բերայի գաղղիական դեսպանատան կից Սթէ Լուի Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր պատարագ պիտի ըլլայ մեծանուն Պ. Թիէրի հոգւոյն համար։

Երեքշաբթի գիշեր ժամ 6ին միջոցներն Իսկիւտար Սէլմանըզի Հայրի թաղը հոգեհայտաւ հետեւեալ երկու տուն այրեցաւ։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Է Ս Ն Ս Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է

31 օգոստ. չորեքշաբթի իրիկուն	40, 42
1 սեպտ. հինգշաբթի առաւօտ	
Բացուեցաւ	40, 43
Ժամ 6 ին	40, 43
Բուսիլի երկաթուղի	Փր. 28
Թղթադրամ	Լր. 180 3/8

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՎՈՅ

Կ. Պոլս 31 Օգոստոս

Ստիթէ Եկեղեցւոյ բաժ. Անդ. Լր. 3, 5	
• Փոխանակութեան	1, 25
Կ. Պոլսոյ Պանթային	2, 28
Քրէտի Եկեղեցւոյ	2,
Քրէտի Օսթրո—Թուրք	—
Փոխ. 1863	Ֆր. 53
• 1865	53
• 1869	49 20
• 1872	47
• 1873	48
Թրամուայ	Օսմ. Լր. 1 7

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՍՏՈՅ

31 Օգոստոս

Անդ. Լր. 109 30	
Նարոյն ոսկի	87 3
Իսկուիալ Ռուս	28 30
Գըրմից	34 7
Հինգ. Քրանք	—
Հինգ. Կոյ	1 17 20
Պրիւն	163

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Լրագրի անուն թերթին այս առաւօտեան թուոյն մէջ հետեւեալ տողերը կը տեսնենք։

«Երէկ փափաղեան Ս. և Գրիստոս տուր Էֆէնտիներն ու Նոր Գարու խմապիրը վերստին կոչուելով օստիկանութեան դուռը, վաշային ներկայացեր, և Ղալաթիոյ Օճախին գոյութեանը և Էնթրիկներուն վրայօք բացատրութիւն տալու հրաւիրուեր են։

«Ասոնք ցոյց տալու համար թէ իրենց դէմ եղած այս ամբաստանութիւններն ինչամոթեան մ'արդիւնք են, որոցմէ որ կը կասկածին թէ եղած է օգ. չարախօսութիւնը կամ մատնութիւնը, ատոնց գործերն յառաջ բերելով Ագապեան վարժարանի մէջ փանտեանի գործած զեղծումներն ու կասկածելի ընթացքը, Պատրիարքարանի մէջ փոխանորդին գործած զեղծումները և Գարիպի մէջ ալ տեսնալիս Պաղտիկ աղային ըրած բռնութիւնները ընդարձակութեն նկարագրեր են, ասկէ եզրակացնել ուղղելով թէ իրենք այս զեղծմանց դէմ խառն խօսած ու գրած ըլլանուն համար է որ ասոնք ալ այս ժամ վերենք զրպարտելու ելած են։

«Փայայն պատասխանելով թէ ինքն իրենց ազգային ներքին գործոցը չուղեր միջամտել, վրանին կոտկածուած քաղաքական յանցանքներն քննելու և բնաւարտ պաշտօն ունենալը կը յայտնէ, և ուրիշ անգամ նորէն կանչելով հորցաքննելու պայմանաւ կարճակէ զանոնք։»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՄԱԿԱՆԻ

Օրհնագ. — 1. Ա. Զ. Գ. Ի. Ն. Գ. Ի. Ն.
— 2. Կոստանթնուպոլիս. — 3. Վեհ. Եկեղեցւոյ.
— 4. Հիւանդ. — 5. Ա. Զ. Գ. Ի. Ն. Գ. Ի. Ն.

Ազնիւ Մատիս.

Խմբագրութիւնն ազգին վտանգովն ունեւելու երեւոյ խմաստակներ երբ իրենց խելքէն ու միտքէն բարձր խնդիրներու մէջ կը մտնեն, երբ քաղաքագիտութեան ինչ լինելն առանց զխոնարհ ազգին առջև քաղաքական ուղղութիւն գծելու յանդուգն փորձերու ձեռք կը զարնեն, և երբ կըսեմ, Ս. Պատրիարքին քաղաքականութիւնը որ միանգամայն ազգինն է՝ իր թէ պաշտպանելու ձեռք ներքև առանց զբաժնին և ըսածին հասկնալու ազգին մէջ կասկածելի մասեր ցոյց տալու և անդոյ տալուսակներ ստեղծելու կեղծքն, զիտե՞ն արդեօք թէ ինչ կընեն, որոն հետ կը խաղան, ըրածին ո՞ր կը յանդի և ինչ ազգեցութիւն կընէ։

Ազգն իր դարաւոր քաղաքականութիւնն ունի, յորմէ մաղի չափ չէկեր, և այնչափ բացորոյ պարզ ու յայտնի է, զոր բացատրելու հարկ չկայ։ Ռուսի ազգին այդ քաղաքականութիւնը խնդրոյ ներքև ձգելու փորձ փորձող տխմարներուն դէմ իմ արհամարհանքս յայտնելով կանչելով կուսակցութեան խնդրոյն։

Ինչպէս ամեն Սահմանադրական ազգաց, նոյնպէս և մեր մէջ ալ կուսակցութիւն կայ, և այնք է որ ըլլայ, զի կուսակցութիւնն ազգային շահուց և իրաւանց պահպանութեան համբաւութեան ներքէ։

Մեր և ուրիշ ազգաց մէջ կեցած կուսակցութեանց տարբերութիւնն այս է որ անոնց սկզբանց վրայ հիմնեալ է, իսկ մերը կարծեաց և միջոցի տարբերութեան։

Այս ալ ապացոյց է թէ հանրական խնդրոց նկատմամբ մեր մէջ կուսակցութիւն չկայ, և այդ ալ փառք է մեր ազգին համար։

Կարծեաց և միջոցի տարբերութիւնը կուսակցութիւնն տեղեկ էր։

Եթէ ամեն բանի վրայ մէկ նոյն կերպով խորհին, եթէ անցնելին հոգեբանական կարողութիւնն հաւասար աստիճանաւ լինէր, եթէ կասկածը որ ապահովութեան մասը է, գոյացում չունենար մտաց մէջ, և եթէ մարդիկ մէյմէկ դերք նական էակներ լինէին, ինչ պէտք կար կարգի, կանոնի, օրինաց, ժողովոց, դատաստանաց և այլն։

Մէկուն զգացումը կրնայ յորդ ըլլալ միւսինը նուազ, մէկ ուրիշինը հանդարտ. կամ մին կրնայ այս կերպ խորհիլ, միւսն այն կերպ։ Ասոնց ամենը բնական է և երբեք չկրնար ըսուիլ թէ այս ինչ խնդրոյն վրայ այն ինչ մարդը տարբեր եղանակաւ խորհելուն համար մեղադրելի է։

Այսպիսի անբնական պահանջումը ընդունէ նոյն իսկ մեղադրելին։

Մարդոց հոգեբանական կարողութեանց զանազան աստիճանները վիճաբանութեան հարկն զգացուցած են, որ լոյս կարտադրէ և համարաւորութիւնն ի վեր հանելու կը ծառայէ։

Յոյժ գեղեցիկ բան է վիճաբանութիւնը և հանելի, եթէ սկզբունքի, կարծեաց և միջոցի տարբերութեան վրայ տեղի ունենայ, նորա օրէնքները փոխադարձաբար յարգուին և անձնական ամուլ վէճերու դուռ չբացուի։

Վիճաբանութիւնը մեր մէջ՝ գծադրարար քիչ բացառութեամբ իր բուն նշանակութիւնն ու ուղղութիւնն կը հետանայ, անձնականութեան և նկատմաներու կը յանդի, բանական իրարարան կատնու և ընթերցողին տալուով ու զգուանը կը պատճառէ։

Առաջին այսպէս ծնունդ առած է լրագրի մը վերջին աւուրց այն անպատեհ յողուածներն, որ մեր ազգային զգացումը վիրաւորելու կը ծառայեն և ամեն պարկեշտ և հայրենասէր անձանց արդար ցասումը կը հրաւիրեն։

Շատ չեմ ուզեր այս խնդրոյն վրայ խօսիլ, որովհետեւ զգուանը և գայրոյթը

հիգիենայի, այլ կը դառնամ նորա տխուր
հետեանց, որ պահ մը կառավարութեան
տարապարտ կառավարող զարթոնքներով,
քանի մ'անձանց տառիկանութեան դուռը
դեղերեւելու պատճառ ընձեռեց :

Ազգային խնդրոց մէջ ծայրայեղ կար-
ծիք ունեցողներ կրնան գտնուիլ, բայց
ազգային տեսութենէ դուրս անոնց տար-
բեր նպատակ ու գիտում վերադրելու
կրնան ոչ ազգը կրնայ ընդունիլ, ոչ յա-
ռաջդիմական կուսակցութիւնն ու ոչ ձա-
խակողմեանն :

Մեր ազատ լաթերը սէտք է որ մեր
մեր մէջ լուանք :

Հասարակաց օդոյն թշնամի ցած ոգ-
ւոյ չլանալ է, չաճամոլութեան կամ
ուրիշ որ և է շարժառիթով ազգային խնդ-
րոց մը վրայ իր ներքին համոզման հակա-
ռակ՝ օգտակար տեսածին դէմ և փնտա-
կար դատածին ի նպատակ մաստաւանելու :

Այսպիսի ընթացք մը ազգային բա-
րոյականութեան բացարձակապէս հակա-
ռակ է . սակայն մեր ամենամեծ դժբաղ-
դութիւններէն մին ալ այս է, որ ժողո-
վոցեան ըստ մեծի մասին ընտրողութե-
նէ և դատողութենէ դուրս գտնուելէն օ-
գուտ քաղելով, խմբաբաժան համար
պէտք եղած հանդիմանքները չունեցող
անձինք՝ ձեռնարկին զրիչ առած՝ աւելի
կը մտնեն քան թէ կը գրեն, և քանի մը
թերթ մտելի ծախելու համար այլ և այլ
անարժան միջոցներու կը դիմեն :

Խմբաբաժան արատ են այսպիսիք,
և խիստ ցաւալին այն է որ Ազգին դը-
րանով կը սնանին :

29 օգոստոս 1877 Պէշկիմաշ

... Խմբագիր Մատիս պատուական
ւրագրոյ .

... Տէ՛ր .

Ձեր ազգօգուտ լրագրոյն էջերուն մէջ
յետագայ տողերուն անկիւն մը շնորհե-
նիք կը խնդրեմ :

Արքունի ճարտարապետ հանգուցեալ
Պալեան Կարապետ Ամիրայ հօր ժառան-
գական օրինակ հաստատած և արդ խմ-
բիւթի վէճիւթի տեսան ներքե գտնուող վա-
զըքէն իւսկիւտարու իճատիւն կողմերը
ձաւորեալի ճանապարհին վրայ 103 թիւ
գետնային տէրն Գուրա օլլուի կողակից
Մարիամ տիկինը այս անգամ նոյն գե-
տինը Պալատու թաղին բնակիչներէն եր-
կաթապործ Հակոբէս աղային վաճառելն
լսեցինք : Լսեցինք նաև թէ սոյն վաճա-
ռումը Պէշկիմաշի խաղաղական խորհրդոյն
միջոցաւ տեղի ունենալով՝ Հայոց Պատ-
րիարքարանն ևս իւր կնիքով վազըքի
սէնէտն վաւերացուցեր է :

Սակայն մինչդեռ մեր յիշեալ վազը-
քին միւթէվիլին եմք, ոչ միայն այսպի-
սի տարօրինակ առեւծախտէ տեղեկութիւն
չունինք, հաստ նաև թաղի բնակիչներու
չեմք այս մասին, այլ միայն վերոյիշեալ
թաղական խորհրդոյն այսպիսի վաճա-
ռում մը ինքնին գործողութիւն և Պատրի-
արքարանին ևս սոյն տարօրինակութիւն
նրն իւր կնիքով վաւերացուցին իւրեանք :

Ուստի յայտնի ըլլալով թէ սոյն վա-
ճառումը առանց միւթէվիլին հրամանի
և վազըքի օրինաց և կանոնաց հակասակ
տեղի ունեցած է, բոլորովին անհիմն և
անօրին է, որոյ վասն կը ծանուցանեմք
ի լուր ամենեւեցուն թէ վերոնշանակեալ
գետնային օրինաւոր տէրն երկաթապործ
Հակոբէս աղան չէ, այլ Գուրա օլլու Մա-
րիամ տիկինը, և ի հարկի պահանջման
սոյն վերջնայն անուամբ տեղի պիտի ու-
նենայ ամեն գործողութիւն : Եւ եթէ ա-
յազգային մէջ ևս սոյն վազըքի տեղեկութեան
վրայ որ և է առեւծախտ մը տեղի ունե-
նայ առանց միւթէվիլին հրամանի,
նոցա ևս անհաստատ և անընդունելի հա-
մարութիւն կը հրատարակեմք ամենեւեցուն :

Կը խնդրեմք ընդունեցէ՛ք յորդանա-
ցըս հաւատարմն :
Ա. Պալեան

... Խմբագիր .

Մայիս 30-ին և 30-ին ամսոյ մէջ
Ազգ. Հիւանդանոցի նուէր Հնորձոյց
անուանքը ներկայիս հրատարակելով,
մեր խորին շնորհակալքը կը յայտնեմք
ամեն անոնց՝ որք առատ նուիրոր բարե-

հաճած են միմիկարել Հիւանդանոցի խնդ-
նայի պատասխանալիներն :

Նոյնօրը գումարը 15195 20

Մեծ. Էֆէնտիք .

Խաչիկ Ալլահիլ Բուսեան Կարմա

Հատ 75 240

Էֆէնտիք մը 7865

Աւետիս Ասլանեան 48

Կարապետ Գրիգորիան 78

Էֆէնտիք մը 52

Յարութիւն Լիմոնձեան 100

Անտոն Մարաշեան 254

Համեստ. Տիկին Հ. Հիւարեան 52

Յակոբ Պոլոսեան ոչխար 1 110

Էֆէնտիք մը հաց քաշ 90 515

» ոչխար հատ 4 740

Հազարեան Էֆէնտիք ծխախոտ

բաքէթ 244 100

Մաքսի բեռնակիրք ոչխար 4 640

» » հաց 123 450

» » 500

Տոք. Գ. Նահապետեան 90

Էֆէնտիք մը 15

Արտատիւր Խորանայ գիւղի բեռ

» » նակիրք 30

» » ոչխար 1 160

Ստեփան Փափագեան գրեանք 120

24950 20

1877 օգոստոս 24 Ազգ. Ա. Փ. Հիւանդ.

Գրասեն. Հիւ. գործակատար

Մաքէն. Մ. Հեռագր. Բ.

ԴԱՆՈՒԻԻ ԳԱՆԱՌԷ

Ո Ւ

ՊԱԼԲԱՆ ԼԵՐԱՆՑ ԱՆՑԻՐԵՐ

(Շ-ր. Դ-ն Բէ- 2020)

2. Բաղարձըգէն ի Բէօթէնտէլ . —
Այս ճանապարհն՝ որ կեդրոնական Թուր-
քիոյ ամենէն նշանաւորն է, փայտաշէն
կառուցելի մը վրայ կ'անցնի Մարիտայի վը-
րայ և երկաթուղայ գիծը կտրելով կը
յառաջանայ գետնային աջ եզրին վրայ
մինչև Քրդ-Տըրքիոյ կիւրծն, ուր կը վա-
զէ Մարիտայի գետը հեղեղի մը նման :
Կապովա գիւղէն անդին հովիտը քիչ մը
կընդարձակի և կը ձևացնէ Պանիոյ գե-
ղեցիկ դաշտը : Այս աւանդէ վեր ճանա-
պարհը կը մտնէ խորին ձորի մը մէջ և
կ'սկսի չարժեքի վեր ելնել . այսպէս կը
ժամանէ Մարիտայի ու Խաչիկի ջրերուն
խառնման գծին վրայ 1200 մետր բարձր
կէտ մը . այնուհետև սակաւ ինչ կը խա-
նարէ, վերտօնի կը բարձրանայ և կը
հասնի վերջնային ի Սամաքօֆ, որոյ բարձ-
րութիւնն է 950 մետր : Սամաքօֆէն մեկ-
նելով ճանապարհն անմիջապէս կ'անցնի
Խաչիկը 30 մետր երկայն կամուրջի մը
վրայ, յետոյ Սամաքօֆի գաղտնի մէջ
տակաւ առ սակաւ բարձրանալով կը մո-
տենայ Խաչիկի և Սիւրումայի առաջանե-
լը բաժանող բարձրութեանց ստորոտին,
և գոթաւորէ զառ ի վերին կիւրծն
Տուպիկիցայի պարանոցին վրայ (1150 մետր
բարձր) : Հոն կը ներկայանայ խորին էջը
մը, որ կը տանի Տուպիկիցայի գաղտնի և
վերջնային Համանուն փոքր քաղաքը :
Տուպիկիցայի անցնելով ճանապարհը կը
կտրէ ձգլմա գետակը քարաշէն կամուրջի
մը վրայ և կը յառաջանայ փոքր գաղտնի
մը մէջ, որոյ ծայրը կը գտնուի ձգլմայի
և Սիւրումայի ջրերը բաժանող բարձրու-
թիւնները . այս կէտն ալ զրուակող արա-
գութեամբ վար կ'ընէ Սիւրումայի Գառ-
քէօրիւսի անուն քարաշէն կամուրջին
վրայ, յորմէ յետոյ գեղեցիկ ու բարե-
րեք գաղտնի մը մէջէն կը ժամանէ ի Բէօս-
թէնտէլ :

Այս կառուցին իւր 152 հազարամետր
երկայնութեամբ Բաղարձըգէն յիւսկիւզ
և ի Պանիա գետով ճանապարհին մէկ
մասն է, հետեալպէս Թիւսիան Վերին
Մակեդոնիոյ և Պանիոյ միացնող նշանա-
ւոր անցքը, զոր կը պաշտպանեն Խաչիկ-
այիի ու Սոֆիայի բնական դիրքերը :

Նիւի ու Բէօթէնտէլի ճանապարհն
ընդ իրարու կը միանան շատ մը ձիւղե-
րով, որոնք նմանապէս կանոնաւոր սը-
ղաւանք են : Պանիայի մասն անուանի
կիրճ մը կայ Սուլու—Տըրքիոյ անուամբ,
յորմէ ու գաղտնի կանոնաւոր ի խաչիկ

գաղտնի և ուր ձգուած է Բաղարձըգէն ի
Սոֆիա ուղղուած երկաթուղին . դարձ-
եալ երկրորդ ճանապարհ մը կը միացնէ
Խաչիկի Սամաքօֆի հետ . Սոֆիայէն
Սամաքօֆի ալ կանոնաւոր կամուրջի մը կը
բաժնուի Խաչիկի կամուրջին մօտ, և ա-
ռանց այս գետնային կիրճը բռնելու կեղծ
Լուսն լեռան վրայ, անկէ կ'ընէ դարձ-
եալ Խաչիկի ձորն և կը միանայ Տուպիկ-
ցայի ճանապարհին հետ Սամաքօֆի կա-
մուրջին առջև :

Բայց ամենէն կարեւոր ձիւղն է Սո-
ֆիայէն Բէօթէնտէլ ձգուած ճանապար-
հն, որ կ'անցնի Վլադպայի պարանոցէն
ի Բէօթէնտէլ և ի Սամաքօֆի և որ Բէօթէնտէլի
լեռան վրայէն կ'ընէ Բէօթէնտէլի գաղ-
տնի և կը կտրէ Սիւրումայի փայտաշէն կա-
մուրջի մը վրայ : Վլադպայի մօտ ուրիշ
ձիւղ մ'ալ կը բաժնուի և կ'երթայ ուղ-
ղապէս ի Տուպիկիցայ, որով Սոֆիա կը հա-
ղորդակի Սէրէզի և Սէլանիկի հետ վեր-
ջնային Սիւրումայից կը մեկնի ճանապարհ
մը Տուպիկիցայի վրայ :

5. Սոֆիայէն ի Ռուսուճուք . — Սոֆեա-
յէն մեկնելով այս ճանապարհը կ'ուղղուի
դէպ յարեւել Սոֆիայի գաղտնի մէջ, կը
կտրէ Խաչիկի ընթացքը փայտաշէն կա-
մուրջի մը վրայ, յետոյ կը մօտենայ լե-
ռանց ստորոտն ու սակաւ առ սակաւ բարձ-
րանալով կը ժամանէ Թաւ-Բէօթէնտէլ գիւղն,
ուր կը մտնէ խորին ձորի մը մէջ և կ'ընէ
Օրհանիկի պարանոցը Բոճա-Պալաքանի վը-
րայ (1250 մետր բարձր) . այնուհետև
յառաջ կը խաչարէ Օրհանիկի փոքր
գաղտնի ուղղութեամբ և կը ժամանէ հա-
մանուն փոքր քաղաքը 12 ժամանակ մէջ :
Օրհանիկէն անդին ճանապարհն առանց
ջրին ընթացքին հետեւելու փոքր լեռան
մը վրայէն կ'ուղղուի Օսկիւրիցայ գիւղին
վրայ, նմանապէս փոքր Խաչիկի հովիտին
մէջ . յետոյ զիմացի բլուրներուն վրայ
եղնելով կը ժամանէ Նապլանիցայ գիւղն,
ուր կ'սկսի բարձրանալ Գարա—Պալաք լե-
ռան վրայ . այս լեռան վրայ կ'ընէ Գա-
նուրի ալեւն գաղտնի, կը կտրէ Վլադպ-
տանի և կը մտնէ ի Բէօթէնտէլ, փոքր ձորի
մը մէջ : Այս քաղաքէն մեկնելով ճանա-
պարհը սակաւ առ սակաւ կը բարձրանայ
Վլադ և Օսմա գետակներուն մէջ եղած
լեռնադաշտին վրայ, կը խաչարէ և կը
կտրէ Օսմա գետակը գեղեցիկ կամուրջի
մը վրայ, վերտօնի վեր կ'ընէ և շատ մը
բլուրներու և հովիտներու մէջէն կը մո-
տենայ Նապլանիցայի, զոր կը կտրէ Պիւլ-
գիւղին առջև : Պիւլցայէն մինչև Ռուսուճուք
ճանապարհը չարունակ կը բարձրանայ ու
կը խաչարէ մինչև Լոճ գետակին կամուր-
ջն, որոյ Ռուսուճուքէն հետեւորութիւնն
է մէկ ժամ :

Ռուսուճուքէն ճանապարհն, որոյ երկայ-
նութիւնն է իւր 280 հազարամետր, Գա-
նուրի գաւառին մեծ սղոյաններէն մին
է . թէ և վաճառականութեան ու հաղոր-
դակցութեան նկատմամբ մեծ կարեւոր-
ութիւն չունի, սակայն ի իստ նշանաւոր է
իւր մեծ երակ մը Գանուրի գաւառին
մէջ, և որուն կը կցին շատ մը ձիւղեր,
զոր այժմ համառօտօր կ'ընանք նկարագ-
րել :

Գ. Ա.

Հեռագր. Բ.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ն Ա Խ Ն Ա Կ Ա Ն

ԳՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ԸՍՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՍՏԱՆ-
ԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ

Ի պէտք չափաւորեալ Գառ. Գառ. Գառ.

Կ Ր Թ Ա Կ Ա Ն

ԳՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ԸՍՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՍՏԱՆ-
ԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ

Ի պէտք չափաւորեալ Գառ. Գառ. Գառ.

ՅՈՐԴԱՆԵԱՑ

Տ. ԽՈՐԷՆ ԱՐԵՎԻԿԱԿՈՐՈՅ ՆԱՐ ՊԵՅ

Առաջարկութեամբ և վաւերացմամբ

Առաջին Կրթական Ժողով

Տարաբաշտ հրամանաւ

Տ. ՆԵՐՍԵՍԻ Ա. ՊԱՏՐԻԱՐԿԻ Կ. ՊՈԼԱՌՑ

Կը ծախուի ամեն գրաւաճառաց խա-
նութիւնն ի գին

Նախնական Գրիստոնէական 30 սանդիւմ
կրթական Գրիստոնէական 30 սանդիւմ :

Կեդրոնական գինն է փարիզու գրատունը :
200 մագճըլար . — Յարիւրեան խան թիւ 15 :

Գարոցաց համար մեծ քանակութեամբ
գնորդներուն հարկերն 10 պեղչ պիտի ըլ-
լայ :

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ր Ե Ի Ք

Գրիստոնէական, Մագճըլար, ձագ, Գառ.

Առաջին Կրթական Ժողով

Հեղինակն իւր ինչ ինչ ուսանաւոր
և արձակ գրաւաճառներն և Լամարգիլի
Գաղղիացի բանաստեղծին Սոֆիայ
հուն գրաւար տաղաչափեալ թարգ-
մանութիւնն ամբողջած է սոյն գրք-
քովն :

Կը ծախուի Եկնի—ձագմի Չիլիկիւր
էր ճատտէսի թիւ 2, Ս. Գ. և Եաղ-
մանեան գրատունը, և ուրիշ գրաւ-
վաճառաց քով :

Գին 1 քանանց թուղթ

Ի Լ Ա Ն

Ասաքիւրի Շահանէ իշխն միւսպայ-
եա օրուհաճաք պիւր միլիոն գըլէ տիւզ
գըրմա խմբապետ տաղ-գըլն սէլէսի
սէրթ վէ սէլէսանը եռաւագ պուղ-
տայտան թաշն օրուհաճաք օլլաք վէ
Տարը Շուրաւա մահփուզ պուլունան
մէմհուր նուսուհէլէրինէ միւթապըզ
պուլունանագ, վէ թաղիսի գոմթրա-
թօտա սէլէսի օլլաք իւլ երիւզ օլլաք
պին գըլէսի հէման վէ գուսուրը տա-
խի օն պէշէր կիւն փարալուր Իքի
թաղաւ իւլ Տէրաւաթէլմա իման
իշխանէ վաճօրա թէպիմ օլլաքաւագ
պիւր մահ նիհայէթինաթ արգաւսը ա-
լլունագ վէ մագ պուղ սէլէսիլէրի վէ-
րուսանաթ պէշաւլլուն նըսփը վէշին
վէ նըսփը տիկէրի օլլաք պիւր կիւն
միւրուրինաթ սիմ մէմհուրի երկրմի
զուրուշա վէ մէմհուրի վերլմէզ իսէ
պօրա փիլաթ իւլ պիլ հիսապ փէրպի
իւլ պէրապէր գալիմ օլլաքաւ Նիլա-
միլէ խաղիսիսինաթ վերլմէք շարթը
վէ շէրպիլիմ սոյի էսի իւլ պէշէր
պիլմիլ գըլէսի երիւզ երկրմի պէշ
զուրուշա թաղիսի էօճէսինաթ օլլաք
իւլլըր բուլմիլին պիւրինսի վէնճէլէսի
կիւնիւ գարաւը գալիսի վերլմէք
իւլինաթ, իմա իմմէլէ թաղիս օ-
լլաքաւ եւլիմ մէքըլլաթ Տարը Շու-
րաի առքէրիլէ կէլմէլէրի :

30 աղօսթ օս 1877 1

Պապը Սէրապէրի

Պէյաղ մատամբօլ թօլի Իքի պին
պէշէր արշըր ալմիլ վարա :

Գաղիքթ թօլի Իքի պին պէշէր
արշըր վարա էլի սէլիլ :

Ասաքիւրի Շահանէ իշխան ան-
պարնա մահփուզ նուսուհէլէրի վէճէ
իւլ միւսպայեա օրուհաճաք պալաւէ
մուրաղգամ Իքի գալիմ մատամբօլ
վէ գալիքթ ալմիլ հափթա խիթա-
միլտա թէպիմ օլլաքաւագ վէ պահա-
սը մագ պուղ սէլէսի փիլաթինաթ
պէր վէճէ վէշին սիմ մէմհուրի եր-
կիւրմի զուրուշա վէ մէմհուրի վերլ-
մէքա պօրա փիլաթ իւլ պիլ հիսապ
փէրպի իւլ պէրապէր գալիմ օլլաքաւ
Նիլաւիլէ խաղիսիսինաթ վերլմէք
շարթը իւլ փիլաթ մուրաղգամ
իւլ իւլ թաղիսի էօճէսինաթ օլլաք
իւլլըր բուլմիլին պիւրինսի վէնճէլէսի
կիւնիւ գարաւը գալիսի վերլմէք
իւլինաթ, իմա իմմէլէ թաղիս օլլաքաւ
եւլիմ մէքըլլաթ Տարը Շուրայի
առքէրիլէ կէլմէլէրի :

30 աղօսթ օս 1877 1

Պապը Սէրապէրի

